ՂԸ.

Ասա լսեմ թէ յոյժ մեծ կոտորած տուեալ է Բրինձ Լուբգովիչն Հիսպանեացւոց, քանզի կոտորեալ է զԹՃ սպանիօլս և զմեծ սէրէսքէր Կեներալն նոցա։ Իսկ և զտօն Գաուլօն վիրաւորեալ է առ Նէապօլսիւ։ Դարձեալ ասեն մեծ պատրաստութիւն զոյ պատերազմի։ (Հ. Թեոդորոս Մէտիաշցի առ Միխիթար, յամի 1744 Յունիսի 26, ի Վենետիկ)։

ՂԲ.

Մի հօտի քահանայ, ընդ անցանելն ի գաւթէ եէնկի ճամիէն, տեսեալ խումբ մի, յորում մի սօխտայ կամ տէվրիշ, խօսի զունայն պատմութիւնս, կամ զերազոց մեկնութիւնս, քահանայն ևս կանգնեալ մտիկ դնէ (զի սովորութիւն է, որ բաց ի տաճկաց կարեն և այլք ազգք կանգնիլ լսել.) յետոյ զկնի ոմանք տաճիկք հարցեալ քահանային, Լսեցեր որպիսի բան խօսի, քահանայն պատասխանեալ թէ բոլորն ունայն և սուտ է, յայնժամ ամբոխ արարեալ տաճիկք կալեալ ածեալ առ դատաւորն, և անտի առ չաուշպաշին, և անտի առ Վէզիրն. առաջի ամենեցուն քահանայն զնոյն բան ասացեալ. յաղագս այսորիկ վճիռ հատեալ եղև մերձ նոյն տեղւոյն յորում վէճն սկսաւ, գլխատել զնա։ Եւ վասն սորա վէճ եմուտ ի մէջ ուղղափառաց մերոց, թէ սա արդեօ՞ք մարտիրոս եղև, թէ անխոհեմ գործոց պտուղ է։ Նաև այս ինչ գիտելի է, որ անատօլուի բանն բուսեր է, զի ի ծանրագոյն հարկապահա[ն]ջութեանց ասպատակութեանց և կողոպտմանց ի յարզրումայ, ևս առաւել ի սեբաստիու, ի թօխաթու և յայլոց տեղեաց փախչին և գան. նաև ի պարսից կողմն ևս այնպէս, լէկգին մէկ դիհէն, պարսիկք մէկ դիհէն, տաճիկք մէկ դիհէն. լէկգին ի կողմանէ սոցա է։ Ասեն ևս թէ պարսիկք կամ քիւրտն կոխեալ են զթօխաթ։ (Հ. Միք. վ. առ Միխիթար, յամին 1744 յուլիսի 28. [Կ. Պոլիս])։

ՃԸ.

Վրդանէս եպիսկոպոսն իւր էնկուրցի աշակերտն քահանայ օրհնեց, հանդերձ մին այլ էնկուրցի փրօփականտայի տղի հետ։... Վասն չինութեան և կարգաւորութեան տանս այսմիկ թվի թէ ներհակն պատահի. վասն որոյ բարւոք թվի ինձ հեռանալ աստի և հոգալ զփրկութիւնն հոգւոյ իմոյ, քան թէ անօգուտ աշխատիլ...։ Պատերազմի կողմանէ յայտ լիցի. մերձ 3 ամիսուկէս է որ երկու էսկեար միմիանց դէմ նըստեր են անպատմելի ՁԸսաս հասուցանելով հասարակ ամենեցուն գողանալով կողոպտելով և աբչտակելով... այս օրերս ասեն թէ նեմսէն պիտի ետ դառնայ իւր երկիրն և Նափօլու թագաւորն դառնայ Նափօլի, որ է պատճառ այսու ամենայնի ՁԸսասի և չարութեանց։ (Յովհաննէս պատկերահաւ առ Միխիթար, յամին 1744 սեպտ. 12. [Հռոմ])։

ՃԺ.

Թագուհին[1] է ի նեղութեան, վասն զի Պրանտապուրկն 90000 զինուորք մտեալ է ի Պոհէմիա, և ի Ռէնումէն մինչ դարձեալք են զօրքն իւր, առ ի գալ յօգնութիւն ընդդէմ Պրանտապուրկին, յանցանելն զգետն Ռէնում կոչեցեալ՝ զմեծ կոտորած տուեալք են Ֆրանձուզքն զօրաց թագուհւոյն։ (Հ. Թեոդորոս Մէտիաշցի առ Միխիթար, յամին 1744. սեպտ. 19. ի Բեդրովարատին)։

---

1. Մարիամ Թերեզա Աւստրիոյ։